

# Բ Ա Մ Բ Ե Ր Ը

(Գի դը Մօպասանի)

Զինուորականներով լցուած գերեզմանատունը ծաղկած դաշտի տեսք էր ստացել։ Ամէն կողմը աչքի էին ընկնում կեպիւններ, կարմիր անդրաւարտիքներ, ոսկեթել ժապաւէններ ու ոսկեկոճակներ, թրեր ու բազկափնջեր։ Այդտեղ էր ամբողջ սպայակոյտը, այդտեղ էին հետեակ զօրքն ու հուսարները՝ իրանց զարդարուն հագուստներով,—դրանք ամենքն էլ անցնում էին գերեզմանների միջով, որոնց վրայի փայտէ, երկաթէ ու մարմարիտէ սև ու սպիտակ խաչերը կարծես իրանց բազուկները տխուր ու արտում տարածել էին հանգուցեալների վրայ։

Նոր էին հողին յանձնել գնդապետ Լիմուզէնի կնոջ մարմինը։ Երկու օր առաջ լողանալիս խեղդուել էր զծրախտ կիներ։

Թաղման կարգն արդէն վերջացել էր, հողնորականներն էլ գնացել էին, բայց գնդապետը՝ յենուած երկու սպայի բազուկներին, մնացել էր կանգնած գերեզմանի առաջ, որի խորքում նա զեռ տեսնում էր իր ջահէլ կնոջ՝ արդէն քայքայուող մարմինը ծածկող դադաղը։

Գնդապետը գրեթէ մի ծերունի էր, բարձրահասակ, նիւհար, սպիտակ բեղերով։ Երեք տարի առաջ նա ամուսնացել էր իր զինակից գնդապետ Սօրտիի աղջկայ հետ, որ հօր մահուանից յետոյ որբ էր մնացել։

Երկու սպան, որոնց կռիւնած էր իրանց մեծաւորը, ուղում էին հեռացնել տանել, բայց նա ընդգիմանում էր և՛ աչքերն արտասուքով լի որ սակայն հերոսաբար չէր թողնում հոսելու, ցածր ձայնով մրմնջում. «Ո՛չ ո՛չ, թողէք միջիջ էլի մնամ» ու յամառութեամբ շարունակում էր զողողելուն ծնկներով կանգնած մնալ այն գերեզմանի եզրին, որ նրան մի անյատակ վիճ էր թւում, ուր ընկել էին իր սիրտն ու հողին—իր ողջ ունեցած-չունեցածը։

Գեներալ Օոմօնը շտապով մօտեցաւ իր սգաւոր զինակցին, բռնեց նրա թևից և համարեա բռնի կերպով քաշելով ասաց. «Դէ, լաւ, բաւական է, իմ հինաւորաց ընկեր. հօ այստեղ չես մնալու. գնանք»։ Այս անգամ գնդապետը լսեց իր զինակցին և վերադարձաւ տուն։

Գնդապետը իր առանձնասենեակի դուռը բանալուն պէս մի նամակ տեսաւ. գրասեղանի վրայ, երբ վերցրեց նամակը, զարմանքից ու յուզմունքից քիչ մնաց վայր ընկնէր. նամակի հասցէն գրուած էր իր՝ նոր հողին յանձնուած կնոջ ձեռքով, իսկ մարկայի վրայ խփած փոստի դրոշմը նոյն օրուայ թուականն էր ցոյց տալիս։

Գնդապետը ծրարը պատռեց և կարդաց հետեւեալը.

«Հայրիկ,

«Թոյլ տուէք ինձ դարձեալ հայրիկ կոչելու ձեզ, ինչպէս որ առաջ էի. անուամբ երբ այս նամակն ստանաք, ես արդէն մեռած ու հողի տակ պառկած կը լինիմ։ Իցէ թէ այդ ժամանակ կարողանաք ինձ ներել։

«Իմ ուզածը ոչ ձեր գութը շարժելն է և ոչ էլ յանցանքս թեթևացնելը, ոչ. այլ միայն կամենում եմ՝ մի ժամից յետոյ մեռնելու պատրաստ կնոջ անկեղծութեամբ ամբողջ ու կատարեալ ճշմարտութիւնն ասել ձեզ։

«Երբ դուք վեհանձնութեան ղեկավարեցիք գրողուած ամուսնացաք հետս, ես էլ երախտագիտութեամբ նուիրուեցի ձեզ և սիրեցի նորատի աղջկայ ամբողջ սրտովս։ Ձեզ սիրեցի համարեա այնպէս, ինչպէս որ հօրս էի սիրում։ Մի օր երբ ես նստած էի ձեր ծնկան վրայ և դուք փայփայում էիք ինձ, ես ձեզ, կամքիս հակառակ, «հայրիկ» անուանեցի։ Այդ՝ սրտի բռնադաշտան ու ինքնաբերական մի ձիւ էր։ Եւ յիրաւի, դուք ինձ համար հայր էիք, և միայն հայր։ Դուք ծիծաղեցիք ու ասացիք ինձ. «Միշտ էլ այդպէս կոչիր ինձ, սիրելիս, այդ ինձ դուր է գալիս»։

«Երբ մենք տեղափոխուեցինք այս քաղաքը—ներեցէք ինձ, հայրիկ,—եւ սիրահարուեցի։ Ո՛հ, երկար ժամանակ ընդդիմացայ, գրեթէ երկու տարի։ Ըսում էք, երկու տարի։ Բայց յետոյ տեղի տուի. ես յանցանք գործեցի, եւ մի ընկած կին դարձայ։

«Իսկ թէ ով է նա,—դուք չէք կարող իմանալ, այդ մասին եւ բոլորովին ապահով եմ, որովհետեւ ինձ միշտ շրջապատում և միշտ էլ հետս էին լինում տասներկու սպայ, որոնց դուք իմ տասներկու համաստեղութիւնն էիք անուանում։



«Հայրիկ, չախատէք իմանալու նրա ով լինելը և միտաւոր նրան» ինչ փոյթ թէ նա արաւ այն, ինչ որ կ'անէր մի ուրիշը՝ ով էլ լինէր նրա տեղը։ Բացի դրանից, ես հաստատ գիտեմ որ նա ինձ օրտանց էր սիրում։

«Բայց լսեցէք դեռ.— Մէկ օր ժամադրութիւն ունէինք «Կցարներին» կղզում. դուք իմանում էք, ջրաղացի մօտի փոքրիկ կղզին։ Ես պէտք է լողալով գնայի այնտեղ, ուր նա պէտք է ինձ սպասէր մացառների մէջ և ապա մնար այնտեղ գրեթէ մինչև երեկոյ, որպէսզի իր վերադարձը ոչ ոք չը նկատէր։ Ես նոր էի հասել բարեկամիս մօտ որ թիփերը բացուեցին և մենք տեսանք մեր առջև Ֆիլիպին՝ ձեր բանբերին, որ մեզ յանկարծակիի բերաւ։ Ես զգացի մեր անել զրութիւնը և մի յուսահատական ճիչ արձակեցի։ Անմիջապէս բարեկամս ինձ ասաց, «Ինձ թողէք այս մարդու հետ, սիրելիս, իսկ դուք հանդարտ լողալով անցէք գնացէք»։

«Ես գնացի, բայց այնպէս էի յուզուած որ քիչ մնաց խեղդուէի։ Վերադարձայ տուն՝ սպասելով որեւէ զարհուրելի բանի։

«Մի ժամից յետոյ դահլիճի նախասենեակում հանդիպեցի Ֆիլիպին, որ ցածր ձայնով ինձ ասաց, «Եթէ տիկինը ինձ յանձնելու նամակ ունենայ, պատրաստ եմ ծառայելու»։ Ես հասկացայ որ նա կաշառուած էր, և կաշառուած էր բարեկամիցս։

«Այնուհետև զրկելիք բոլոր նամակներս նրան էի տալիս՝ բարեկամիս տանելու։ Եւ նա տանում էր, պատասխաններն էլ բերում։

«Այդպէս տեղից մօտաւորապէս երկու ամիս Մենք եւ ձեզ նման վստահութիւն ունէինք նրա վրայ։

«Բայց ահա թէ ինչ պատահեց, հայրիկ։ Մի օր լողալով գնացի միննոյն կղզին. տեղ հասնելուս պէս փոխանակ բարեկամիս՝ ձեր բանբերին գտայ այնտեղ։ Այդ անպիտանը ինձ սպասելիս է եղել. նա յայտնեց որ ինձ կը մատնէ և իմ բոլոր նամակներս, որ նա գողացել ու պահել էր, կը յանձնէ ձեզ, եթէ ես չը համաձայնեմ իր կամքը կատարելու։

«Ո՞հ, հայրիկ, սիրելի հայրիկ, երկիւղը պատեց ինձ, մի անարդ ու անարժան երկիւղ. վախեցայ մանաւանդ ձեզանից, ձեզանից՝ որ այնպէս բարի էիք դէպի ինձ, բայց խաբուած ինձանից. վախեցայ նոյնպէս նրա համար.— դուք կը սպանէիք նրան, — վախեցայ գուցէ նաև ինձ համար։ Միթէ ես գիտեմ, ինչս ինձ կորցրած, ես խելագարուածի պէս էի։ Մտածեցի մի անգամ նորից կաշառել այդ թշուառականին, որ ինչ խայտառակութիւն, նոյնպէս սիրում էր ինձ։

«Մենք՝ կանայքս, այնպէս թոյլ ենք որ մենք մեզ աւելի շուտ ենք կորցնում, քան թէ դուք՝ տղամարդիկդ։ Բացի դրանից մի կի՛ն բարոյապէս չը պէտք է ընկնի, սակայն երբ մէկ անգամ ընկնում է, այնուհետեւ նա աւելի ու աւելի է ցած գնում։ Մի՛թէ գիտէի արածս։ Ես միայն այն էի հասկանում որ ձեր երկսիւից մինն ու մինդ և ես մեռնելու էինք, և ես անձնատուր եղայ այդ անսրբ արարածին։

«Ինչպէս տեսնում էք, հայրիկ, ես չեմ աշխատում ինձ արդարացնելու։

«Սակայն... սակայն պատահեց այն, ինչ որ պէտք է որ ինքս գուշակած լինէի.— շարունակ սարսափ ազդելով վրաս, նա ինձ տիրեց և նորից ու նորից տիրեց, երբ կամեցաւ։ Ուրեմն նա եւ դարձաւ սիրեկանս, ինչպէս միւսը, ամեն օր։ Մի՛թէ զգուշեցի բան չէ, և սրպիտի պատիժ, հայրիկ։

«Ահա այդ պատճառով ինքս ինձ ասացի. պէտք է վերջ տալ այս տեսակ կեանքին։ Կենդան՝ անկարող էի խոստովանուել ձեզ այսպիսի ծանր յանցանք, մեռած՝ համարձակուում եմ ամեն բան ասել։ Բացի մեռնելուց ուրիշ կերպ վարուել չէի կարող, որովհետեւ չափազանց շատ էի արատաւորուել, ո՛չ մի այլ միջոցով չէի կարող մաքրուել մեղքերիցս։ Այլևս ո՛չ կարողանում էի սիրել և ո՛չ էլ սիրուել։ Ինձ այնպէս էր թւում թէ ես ամենքին էլ կեղտոտում եմ՝ լոկ ձեռքս տալով նրանց։

«Անմիջապէս պէտք է գնամ լողանալու, որտեղից այլևս չպէտք է վերադառնամ։

«Այս գրութիւնս ձեզ կը հասնի սիրեկանիս միջոցով։ Այս նա կը ստանայ իմ մահուանից յետոյ և առանց որեւէ բան կասկածելու կը հասցնէ ձեզ՝ կատարելով իմ վերջին իղձս։ Իսկ դուք... նամակս կը ստանաք հանգստարանից վերադառնալուցդ յետոյ։

«Մնաք բարով, հայրիկ, էլ ուրիշ ոչինչ չունիմ ձեզ ասելու։ Արե՛ք, ինչ որ բարւոք կը համարէք, միայն թէ ինձ ներեցէք»։

Գնդապետը սրբեց ձակատի սառը քրտինքը. սակայն նա շուտով տիրապետեց իրան և նա նորից վերստացաւ ձակատամարտերում ունեցած իր սառնասրտութիւնը։

Նա հնչեցրեց զանգը։

Ներս մտաւ մի սպասաւոր։

— Ֆիլիպին ուղարկեցէք այստեղ, ասաց նա։

Յետոյ երբ նա կէս-մին բաց արաւ գրասեղանի գղրոցը, գրեթէ նոյն բոպէին ներս մտաւ Ֆիլիպը, մի բարձրահասակ՝ չէկ բեղերով, դաժանատես ու խորամանկ աչքերով զինուոր։



Գնդապետը ուղիղ նրա աչքերին նայեց:

— Դու պէտք է ասես ինձ կնոջս սիրեկանի անունը:

— Բայց, պարոն գնդապետ...

Գնդապետը կիսաբաց գլըրոցից վերցրեց ատրճառակը:

— Դէ, չհետ, ասաց նա. դու հօ լաւ գիտես որ ես կատակ անել չեմ սիրում:

— Եթէ այդպէս է, լաւ... պարոն գնդապետ... Դա հարկւրապետ Սէն-Ալբերն է:

Այդ անունը արտասանեց թէ չէ՝ ատրճառակը բացուեց և նա երեսի վրայ փռուեց գետին: Գնդակը ճիշտ ճակատի մէջ տեղին էր դիպել:

Թարգմ. ԼԵՒՈՆ Մ.—Ա.